ընկնող դերասաններից մեկն էր լինելու: Բայց նա իր ամբողջ կյանքը նվիրեց մի գործի, որը փաստորեն նրաանով սկսվեց:

Նա առաջին թատերական քննադատությունը էր, որի կարծիքը թանկ էր շատ ու շատ դերասանների ու թատերագիրների համար: Նա առաջինն էր սովետահայ թատերագիտության մեջ, որ հայ արդի թատրոնի պատմության ուրվագիծը տվեց:

Այն ժամանակ, երբ թատերագիտությունը և թատերական քննադատությունը դեռևս մասնագիտական զբաղմունք չէր, նա միակն էր, որ նվիրվեց բացառապես այդ ասպարեզին և հանդես էր գալիս հոդվածներով ու գրքերով: Դրանցից լավագույնը, թերևս, «Թատերական ակնարկներ» գիրքն էր, որ ժամանակին հնչեց իբրև հայ թատերական տեսության ծաղրպշիռ խոսք: 1944-ի համամիութենական շեքսպիրյան կոնֆերանսին նրա տը-

[illegible] ազգին ու հեռատես ջանքերի շնորհիվ, մի անգնահատելի հարստություն է հավաքված: Եվ եթե այսօր շատ արվեստագետների ու գրողների (Օլգա Գուլազյան, Հայմիկ, Դերենիկ Դեմիրճյան, Արմեն Արմենյան, Միքայել Մանվելյան, Լևոն Ջալաթար և ուրիշներ) հուշագրությունները մեր գրականության փաստերն են, ապա դրա համար մեծապես պարտական ենք թատերական թանգարանի ղեկավարին, որը հաճենարարում էր նրանց, խնդրում և համոզում, որպ ինքնան գործ է առել, դարձյալ անհիշ ուներ:

Մենում է, որ երախտապարտ սրտով հրաժեշտ տանք կյանքից հեռացած մեր ընկերոջը՝ հիշենք, թե ինչ է եղել նա ամեն մեկիս համար, երբ մեր առաջին քայլերն էինք անում, հանենք գլխարկներս ու երկրպագենք լռությամբ ուղեկցենք դեպի մի այլ աշխարհ, որին ներկայանում է նա իր անցած ճանապարհի մաքրությամբ, անբեն սրտով, վաստակած կյանքով:

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

Հայաստանի գրողների միության վարչությունը, «Գրական թերթի», «Սովետական գրականություն», «Լիտերատուրնայա Արմենիա», «Գարուն» ամսագրերի խմբագրությունները խորապես վշտացած են սովետահայ նշանավոր թատերագետ, ՍՍՀՄ գրողների միության անդամ

ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ

մահվան առթիվ և ցավակցում են հանգուցյալի հարազատներին:

մեկն ինոնեռագիտական պանգիայի երևան էր, որ տեղ ունեցավ կինոյի տան մեծ դահլիճում:

Ներածական խոսքով Երևան բացեց ՀՍՍՀ վարչության քարտուղար Մ. Սարգսյանը:

Այնուհետև իրենց ճայրենասիրական բանաստեղծությունների ընթերցմամբ հանդես եկան Մ. Սարգսյանը, Ռ. Դավոյանը, Ա. Սահակյանը, Լ. Դուրյանը, Ս. Հարությունյանը, Հ. Հովհաննիսյանը, Ռ. Ռոմանովան, Ալ. Մեղվենը (Մոսկվա), Վ. Դավթյանը, Հիդայաթը, Կ. Զաչանին, Ա. Ջեյնալին, Գ. Էմինը, Հ. Սահյանը:

Երևկոյի ընթացքում Մ. Սիմոնյանի, Ս. Մեսրոպյանի, Վ. Ալբաչյանի, Վ. Հակոբյանի և Ս. Յուզբաշյանի կատարմամբ հնչեցին սովետահայ ճանաչված բանաստեղծների ստեղծագործությունները:

[illegible] մանող սրտատոչ, բազմաթիվ ընթերցողների ներկայությամբ, քննարկվում էր Մկրտիչ Սարգսյանի «Քաջ Նազար» վեպը:

Զեկուցմամբ հանդես եկավ գրականագետ Մեհիթաբ Մելքոնյանը: Նա խոսեց վեպի կառուցվածքի, գլխավոր հերոսի, լեզվի, ոճի մասին, արծարծեց գաղափարական և գեղարվեստական խնդիրներ, ցույց տվեց ստեղծագործության առնչությունները հեքիաթի դասական վերաստեղծումների հետ և այն Գորը, որ բերում է հեղինակը հայոց նազարատումի ասպարեզը:

Մ. Սարգսյանը Նազարի կերպարը գծում է՝ այն պոկելով հեքիաթային անհավանականությունից: Այստեղ գործում է ոչ թե հեքիաթի, այլ իրական պայմանականությունը: Դիպվածը կամ բախտը նազարական հաջողությունները գնում են այդ նույն ստի ու կեղծիքի ետևից, իրենց իսկ ձեռքով դարձնելով հոգևոր ստրկությունն ու բարոյական անդիմությունը:

Դա շատ դժվարին, բարդ թեմա է, որին ձեռնարկելը պայմանավորված է եղել Սարգսյան-գրողի ստեղծագործական հասունացմամբ, կենսական ու գրական փորձի աստիճանական կուտակմամբ, կյանքի բուն իմաստն ու միջուկը բացահայտելու սեռեռուն ձգտմամբ: Իր նախորդ վեպերում, պատմվածքներում ու նովելներում՝ շարունակ հղկելով ու կատարելագործելով մարդկային հոգիների ամենաթաքուն անկյունները լուսավորելու, նրանց շարժումները վեր հանելու վարպետությունը, հասնելով գրելանձևի ու ոճի հստակության, Մ. Սարգսյանը, ի վերջո, ներքին վեստական պատմությունը, ընթերցողներին հասցնելու ի՞նչ ձաջ Նազարը, նազարականության ի՞նչ ըմբռնումն ու մեկնաբանությունը: Նրա վեպում զավեշտականը հյուսվում է ողբերգականի հետ: Թեթև, հումորիստական դեպքերն ու նկարագրությունները աստիճանաբար իրենց տեղը գիջում են համապարփակ ու բարդ խնդիրների, և ընթերցողը, մանավանդ վեպի վերջին գլուխներում, դեմ է առնում ժամանակակից լուրջ մտահոգությունների: Հարազատ մնալով ժողովրդական հեքիաթի ակունքներին, հեղինակը, միաժամանակ, Նազարի կերպարը կառուցել է ժամանակակից հասարակական ու քաղաքական խնդիրների տեսանկյունից, նրան մոտեցրել մեզ, մեր ժամանակին: Հեքիաթի փիլիսոփայական եզրակացությունները արդիական քննության ենթարկում:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Կ. Դանիելյանը, Ն. Ադալյանը, Վ. Պարտիզունին և Ս. Սարինյանը:

Զեկուցողը և ելույթ ունեցողները հեղինակի ուշադրությունը հրավիրեցին լեզվա-ոճական և կառուցվածքային որոշ թերություններ ի վրա, որոնց վերացումը ավելի կբարձրացնի վեպի գեղարվեստական-գաղափարական հնչեղությունը:

Վերջում հանդես եկավ հեղինակը: Նա խոսեց այն ազդակների մասին, որոնք իրեն մղել են գրելու «Քաջ Նազար» վեպը, որի թեման որքան հին է, այնքան էլ նոր ու հավերժորեն կենդանի: Եվ պատահական չէ, որ այն տևականորեն զբաղեցրել է և այսուհետև էլ կզբաղեցնի հայ գրողի միտքն ու երևակայությունը:

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՑ ՀԵՏՈ

«Ինքնադիմանկար»:

ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի վերջերս կայացած ցուցահանդեսը մեծ հաջողություն ունեցավ: Հայրենավոր այցելուները դիտեցին նեռկայացված աշխատանքները և արտահայտեցին հիացական կարծիքներ: Ռ. Խաչատրյանը արվեստասերների դատին է ներկայացնում հիմնականում մատիտանկար դիմանկարներ, որոնք աչքի են ընկնում պրոֆեսիոնալ բացառիկ մակարդակով և բոլորին այնքա՞ն ծանոթ բնորդներին նման լինելով: Կաչառում է նաև նկարելու տեխնիկայի ընտրությունը՝ մեկնությունից ծանոթ մատիտը. հանդիսատեսները յուրաքանչյուրը միանգամայն ի վիճակի է զգնատելու նկարչի՝ մատիտին տիրապետելու արտիստականությունը:

1978-ին արված կնոջ դիմանկարում ուրվագծված է միայն գրիչը, արված են անկանոն շարժիներ, բայց մենք տեսնում ենք կանացի տպավորվող դեմքի՝ իրեն բնորոշ հմայքի կնիքով: Կատարված է գեղարվեստական ակտ: Դա արվեստի հենց այն գաղտնիքն է, որը ենարավոր չէ բացատրել վերլուծությամբ. դա գեղարվեստի ծրագրնդյան մոգականությունն է:

Նկարիչը մոդելի հետ ծայրաստիճան նմանության է հասնում բրնարդի նկարելու շնորհիվ: Մենք նկատում ենք, որ նույնիսկ իր ինքնադիմանկարն ստեղծելիս նա գիտել է հայելու օգնությանը, և նկարում աշխատող ձեռքը ստացվել է ձախը: Ռ. Խաչատրյանը աչքաթող չի անում բնորդի դեմքի անգամ մի ծալքը, մի կնճիռը: Նրա համար դեմքը հոգու հայելին է, միայն թե պետք է ուշադիր նայել ու տեսնել նրա խարը: Նկարչին հետաքրքրում են հոգու առավել նուրբ ու անընշմարելի տեղաշարժերը: Առանձնահատուկ շեշտադրված նմանության միջոցով նա ձգտում է ըմբռնել, ճնել մարդու ողջ ներաշխարհը և ոչ թե ընդգծել ամենաբնորոշը:

Դիմանկար ստեղծելու այս կոնցեպցիայի մեջ է թաքնված նկարչի հաջողության մի այլ գաղտնիքը՝ նկատում այն բանի հանդեպ, որ վատի կողքին միշտ կա լավը, և նա աշխատում է անպայման բացահայտել, ցույց տալ այդ լավը:

Ռ. Խաչատրյանը սիրում է իր հերոսներին հանդերձավորել, նրանց շուրջը ստեղծելով «մի փոքրիկ կառնավալ» (Ռ. Սալախով), աչքի առաջ դասավորելով կլասիկայից մինչև մեր օրերը ներառնող զուգադրությունների մի ողջ շարք: Այնպիսի գործեր, ինչպիսիք են «Հուդիթը», «Լաուրան», «Ափու լալա Մահարին», «Դավիթը», «Բոչարովը» և ուրիշներ, ի մի են հավաքում ժամանակակից և հին շրջանի կերպարներին. նրանք միավորվում, ամբողջացնում են իրար և մեզ համոզում, որ մարդկային անհատականության արժեքը անփոփոխ է մնացել վաղնջական շրջանից սկսած մինչև մեր օրերը: Այդ աշխատանքները սփռում էին հավերժական գեղեցկությանն առանձնանատուկ բույր ու հմայք:

Իր նկարների ողջ «դասականությամբ» հանդերձ, հանգամանք, որին նա հասնում է չանգիր մշակվածության, նշգրիտ գծի, զուգադրականության, երբեմն հայելի միջոցով, Ռ. Խաչատրյանը մնում է որպես 20-րդ դարի ստեղծագործող: Պայմանականությունը, որով հագեցված է մեր ժամանակի արվեստը, չի շրջանցել նաև նրան: Դա նկատելի է հատկապես «Աշտի դիմանկարի» (1979) սկզբունքով արված մյուս դիմանկարներում: Դրանցում մշակված է միայն գիծը, որը երեում է պարզորոշ, հստակ և ծավալային, այսինքն եռաչափ, իսկ մնացածը հագիվ նշմարված է նուրբ ուրվագծով, և դա հաճախ պատկերացում չի տալիս ծավալային կոնստրուկցիայի՝ մարդու «ասկրային սիստեմի» մասին: Հագիվ թե հարկ կա այստեղ խոսելու կոմպոզիցիայի մասին, բայց նաև անվիճելի է, որ Ռ. Խաչատրյանի աշխատանքներում իրար են բախվում աշխարհընկալման, «ավեստագեսի աչքի» երկու տեսակ: Դա՛ էլ բնական է, մարդը երբեմ չի կարող կտրվել, հեռանալ իր ժամանակից: Գուցե հարկ է հենց այդ «կոմպրոմիսով» բացատրել նկարչի դիմանկարներին բնորոշ որոշակի «մոմենտները», նրա մոդելների և մեր միջև ընկած ինչ-որ բանգարանային հեռավորությունը: Բայց չէ՞ որ ոչ ոք ապահովագրված չէ անհաջողությունից: Ռ. Խաչատրյանի լավագույն գործերում առկա է ստեղծագործական անհատականության, մարդկային խառնվածքի բարդության, մարդու կյանքի արժեքավորության հրմայիր:

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Լաուրա»:

«Ջիմա»:

ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻՆ

Օրերս գրողների տանը տեղի ունեցավ երեկո՝ նվիրված սփյուռքահայ մեծանուն գրող ու քննադատ Հակոբ Օշականին՝ Երևանում նրա երկերի ժողովածուի լույս ընծայման առթիվ: Երեկոն ներածական խոսքով բացեց արձակագիր Ն. Ադալյանը: Նա նշեց այն խոշոր դերը, որ շուրջ հինգ տասնամյակ կատարել է Օշականը հայ գրականության մեջ՝ իր ժողովրդին թողնելով գեղարվեստական, գիտական ու քննադատական բացառիկ հարուստ մի ժառանգություն, որտեղ մնայուն բազմաթիվ արժեքներ կան:

«Հակոբ Օշականի աշխարհը» հանգամանալից զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Դանիելյանը: Գրականագետ Մ. Մելքոնյանի ելույթում շոշափվեցին Օշականի կոթողային ստեղծագործության՝ «Համապատկեր արևմտահայ գրականության» բազմահատոր պատմության գիտական ոճի որոշ հարցեր:

Օշականի երկերի ժողովածուի կազմող և առաջաբանի հեղինակ Ստ. Կուրտիկյանի ելույթը նվիրված էր գրողի կենսագրության և գրական ժառանգության մեր հանրությանը դեռևս անհայտ կողմերին:

ԳՐՈՂՆԵՐԻ ՏԱՆԸ

ՄԵԾ ԴԱՀԼԻՃ

Նոյեմբերի 13-ին, ժամը 19-ին տեղի կունենա հանդիպում «Հայֆիլմ» կինոստուդիայի թողարկած «ԿՏՈՐ ՄԸ ԵՐԿԻՆՔ» նոր գեղարվեստական կինոնկարի ստեղծագործական խմբի հետ:

«Գրական թերթ»
հասցեն և հեռախոսները

375019—Երևան—19, Բարեկամության № 3, հեռախոսներ. Գլխավոր խմբագիր՝ 52—05—94, գլխավոր խմբագրի տեղակալ՝ 58—95—80, պատասխանատու քարտուղար՝ 58—97—30, տեսական-քննադատական, պոեզիայի, արձակի բաժիններ՝ 58—97—20, արվեստի բաժին՝ 56—13—01:

Գլխավոր խմբագիր՝ ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խմբագրական կոլեգիա— Ն. ԱԴԱԼՅԱՆ, Կ. ԱԶԱՐՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), ԱՂԱՎՆԻ, ՀՈՎՀ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ. ԴԱՎԹՅԱՆ, ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, ՀԵՆՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հ. ՍԱՀՅԱՆ, Ս. ՍԱՐԻՆՅԱՆ

ՎՆ 04053 Թերթը տպագրվում է օֆսեթ եղանակով: 1 2 3 4 5 6 7 8. ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարան, Երևան, Ավ. Իսահակյան փող. № 28.

Типография издательства ЦК КП Армении. Ереван-9, ул. Ав. Исаакяна, 28.

Ինդեքս 69106

ГРАКАН ТЕРТ Ереван
7.11.1980